# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

***Յունվարի 1-ին, շաբաթ. - Գ. օր Ծննդեան պահոց:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ջավեն աբեղա Հակոբյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Արդարեւ ասեմ ձեզ, զի այրին այն աղքատ աւելի արկ քան զամենեսին» (Ղուկ. ԻԱ 3) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 27):

***Յունվարի 2-ին, կիրակի. - Դ. օր Ծննդեան պահոց:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Նարեկ աբեղա Ավագյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Եւ ես ուխտեմ ձեզ՝ որպէս եւ Հայր իմ ուխտեաց ինձ զարքայութիւն» (Ղուկ. ԻԲ 29) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 30):

***Յունվարի 5-ին, չորեքշաբթի. - Ճրագալոյց Ծննդեան եւ Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Տաթև արքեպիսկոպոս Սարգսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

***Յունվարի 6-ին, հինգշաբթի. - ՏՕՆ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: «Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը «Եւ ծանիջիք զճշմարտութիւնն, եւ ճշմարտութիւնն ազատեսցէ զձեզ» (Հովհ. Ը 32) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 3):

***Յունվարի 7-ին, ուրբաթ. - Բ. օր Ծննդեան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Կյուրեղ քահանա Դնեճյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Տեր Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 33):

***Յունվարի 9-ին, կիրակի. - Դ. օր Ծննդեան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հովակիմ աբեղա Մանուկյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Այսուհետեւ չես ծառայ, այլ որդի. եթէ որդի, եւ ժառանգ Աստուծոյ» (Գաղ. Դ 7) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 36):

• ***Յունուարի 13-ին, հինգշաբթի. - Ը. օր Ծննդեան: Տօն անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մուշեղ աբեղա Բաբայանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Եւ իբրեւ լցան աւուրք ութ թլփատել զնա, եւ կոչեցաւ անուն նորա Յիսուս, որ կոչեցեալ էր ի Հրեշտակէն» (Ղուկ. Բ 21) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 39):

***Յունուարի 15-ին, շաբաթ. - Տօն Ծննդեան Ս. Յովհաննու Կարապետին:***

Այսօր Մայր Տաճարում, Հովհաննես Մկրտչի Խորանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Զոհրաբ աբեղա Կոստանյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Զի եղիցի մեծ առաջի Տեառն. եւ գինի եւ օղի մի՛ արբցէ, եւ Հոգւով սրբով լցցի անդստին յորովայնէ մօր իւրոյ» (Ղուկ. Ա 15) բնաբանով քարոզ խոսեց:

***Յունուարի 16-ին, կիրակի.*** - Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Ուրախ լերուք երկինք եւ ցնծասցէ երկիր, գոչեսցեն լերինք զցնծութիւն եւ բլուրք զարդարութիւն, զի ողորմեցաւ Աստուած ժողովրդեան իւրում, եւ զխոնարհս ժողովրդեան իւրոյ մխիթարեաց» (Եսայի ԽԹ 13) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 43):

***Յունուարի 23-ին, կիրակի.*** - Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը: «Հայր մեր»ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 46):

***Յունուարի 30-ին, կիրակի.*** - Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Կյուրեղ աբեղա Վարդանյանը: Ս. Պատարագի ընթացքում հրապարակվեց Վեհափառ Հայրապետի Սրբատառ Կոնդակը՝ նվիրված Հայոց Գրերի Գյուտի 1600-ամյակին, որն ընթերցեց Մայր Աթոռի դիվանապետ Գերաշնորհ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը (տե՛ս էջ 14):